Հաստատում եմ՝ ----------Ա.Նազարյան

29.12. 2023 թ.

«ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԻ ՎԱՀՐԱՄ ԲԱԲԱՅԱՆԻ ԱՆՎԱՆ N2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ

I ԿԻՍԱՄՅԱԿ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՄԿԱ գծով տեղակալ՝----------Թ. Բաբայան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպում:
2. Պարտադիր կրթության կենսագործում:
3. Ուսումնական հաստատության սովորողների ֆիզիկական, հոգեկան և սոցիալական առողջությանն ուղղված աշխատանքներ:
4. Ներդպրոցական վերահսկողության համակարգ:
5. Աշխատանք մանակավարժական կադրերի հետ, որակավորման բարձրացում:
6. Կազմակերպչական-մանավարժական աշխատանք:
7. Աշխատանք աշակերտական խորհրդի հետ:
8. Աշխատանք ծնողների հետ:
9. Ֆինանսատնտեսական գործունեություն և ուսումնանյութական բազայի ամրապնդում:
10. ՄԱԿ-ի «Երեխայի իրավունքների» կոնվենցիային համապատասխան նպաստող գործողությունների Պ Լ Ա Ն Ի Կ Ա Տ Ա Ր Ո Ղ Ա Կ Ա Ն /ըստ ՈՒԴԱՊ պլանի/:
11. Իրավախախտումների կանխարգելմանն ուղղված աշխատանքներ 1-ին կիսամյակում:
12. Դպրոց – ընտանիք – հասարակություն կապի արտացոլումը սովորողների դաստիարակչական աշխատանքներում 1-ին կիսամյակում:
13. ՏԵՂԵԿԱՆՔ ընթացիկ աշխատանքների մասին 1-ին կիսամյակում:
14. Իրագործված համադպրոցական և դասարանական միջոցառումներ 1-ին կիսամյակում:

Դպրոցի առաքելությունն ըստ զարգացման 5-ամյա ծրագրի.

- «Դպրոց բոլորի համար»,
- «Դպրոց, որտեղ կարող են հաջողությամբ սովորել և՛ սովորական, և՛ օժտված երեխաները»:

Ն պ ա տ ա կ ը.

- ✓ Դպրոցում ուսումնադաստիարակչական գործընթացի այնպիսի մոդելի ձևավորում, որի կրթության բովանդակությունը կնպաստի սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ապահովմանը, անհատականության ձևավորմանը և զարգացմանը:
- ✓ Ստեղծել ժամանակակից կրթական պահանջներին բավարարող ուսումնական միջավայր, որը կնպաստի սովորողի գիտակցական, բարոյական, հուզական, ֆիզիկական զարգացմանը:
- ✓ Ստեղծել սովորողների մոտ ստեղծագործական ունակությունների զարգացման պայմաններ, որը կնպաստի նրանց ինքնազարգացմանը և ինքնաիրացմանը կրթական արդի պահանջմունքներին համապատասխան:
- ✓ Դպրոցի մանկավարժական համակազմի մասնագիտական զարգացում, որակավորման տարակարգի բարձրացում:
- ✓ Ուսուցիչների ինքնազարգացման ուղղությամբ աշխատանքների շարունակականության /առարկայական, մեթոդական, ՏՀՏ կիրառման ուղղությամբ,առկա և հեռավար դասերի վարման/ ապահովման միջոցով ուսուցման որակի զարգացում:
- ✓ Ուսուցիչների համակարգչային գրագիտության և դասապրոցեսում ՏՀՏ-ների կիրառման կարողությունների զարգացում:
- ✓ Ուսումնական գործընթացում տեղեկատվական և հաղորդակցական ժամանակակից տեխնոլոգիաների օգտագործման արդյունավետության բարձրացում:
- ✓ Նյութատեխնիկական բազայի հարստացում:
- ✓ Ուսումնանյութական բազայի հարստացում:
- ✓ Լաբորատորիաների ստեղծում:

Խ ն դ ի ր ն ե ր ը.

1) Կրթական գործընթացի կազմակերպման նոր որակի ստեղծում:

- Կրթության և դաստիարակության իրականացման նոր մոտեցման միջոցով,
- ՏՀՏ գործիքների միջոցով մտածողության զարգացմամբ,
- Տարրական և հիմնական դպրոցում տարբերակված ուսուցման միջոցով, ներառականության իրագործմամբ, ինտեգրված դասերով ,
- Ծնողական համայնքի հետ համագործակցության շարունակական աշխատանքների միջոցով,
- Սովորողների հետ հոգևոր-բարոյական դաստիարակչական, շարունակական աշխատանքների միջոցով,
- Սովորողներին ավարտական քննություններին նախապատրաստելով,
- Ուսումնակրթական բարենպաստ և անվտանգ միջավայր ստեղծելով:

2) Տարրականից հիմնական կրթական աստիճան սահուն ապահովում:

3) Մանկավարժական կոլեկտիվի ակտիվ մասնակցություն համադպրոցական ուսումնադաստիարակչական աշխատանքներում:

Ուսուցման և ուսումնառության արդյունավետ կազմակերպման միջոցով ձևավորել՝

- համակողմանիորեն զարգացած,
- մասնագիտորեն կողմնորոշված,
- ազգային արժեք ներկրող,
- հայրենասեր,
- գլոբալիզացիայի մարտահրավերներին պատրաստ,
- համաշխարհային աշխատաշուկայում կողմնորոշվող և մրցունակ,
- մարդասիրության ոգով դաստիարակված կոմպետենտ քաղաքացիներ:

Պարտադիր կրթության իրագործումը կատարվել է 1-ին կիսամյակում վերոնշյալ նպատակադրումներով և խնդիրների սահմանմամբ

Հայաստանի կրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է:

1. Ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպումը

Հ/Հ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկերտը	Պատասխա-նատու	Նշում
1	Դասղեկական աշխատանք Օգնել դասղեկներին կազմելու դաստիարակ-չական աշխատանքների աշխատանքային պլանը և ներկայացնել հաստատման: ա) Դասղեկներից պահանջել աշխատանքային պլանի հիմքում ամրագրել հետևյալ դրույթները. - Ստեղծել դասարանական ամուր կոլեկտիվ: - Աշակերտներին տալ հայեցի դաստիարկութ-յուն, նրանց մեջ արթնացնել ազգային արժանապատվություն և հպարտություն: - Դաստիարակության հիմքում դնել հիմնական հանրակրթական դպրոցի շրջանավարտի նկարագրի պահանջները: Դասղեկական աշխատանք Օգնել դասղեկներին կազմելու դաստիարակ-չական աշխատանքների աշխատանքային պլանը և ներկայացնել հաստատման: բ) Շաբաթը մեկ անգամ անցկացնել դասղեկի ժամ և այն ծառայեցնել երեխաների բազմա-կողմանի դաստիարակության և մանկական առողջ կոլեկտիվի ձևավորման նպատակին: գ) Հետևողական աշխատանքի միջոցով հնարավորինս նվազեցնել անհարգելի բացակայությունները: դ) Կիսամյակը 1-2 անգամ հրավիրել դասարա-նական ծնողական ժողով: Ամուր հիմքերի վրա դնել աշակերտ-դպրոց-ընտանիք կապը: Ծնողների համար կարդալ մանկավարժական թեմաներով զեկուցումներ: ե) Յուրաքանչյուր դասարանում ստեղծել ծնողխորհուրդ (բաղկացած 3-5 հոգուց), ապա-հովել ծնողխորհրդի մասնակցությունը ուսումնական գործնթացի կազմակերպմանը: զ) Սահմանել բաց դռների օր, ապահովել ծնող-ուսուցիչ կապը:	Սեպտեմբեր Ուստարվա ընթացքում	ՄԿԱ տեղակալ, ԴԱԿ Տնօրեն, ՄԿԱ տեղակալ, դասղեկներ, դասվարներ ՄԿԱ տեղակալ, դասղեկներ, դասվարներ ՄԿԱ տեղակալ, դասղեկներ, դասվարներ Տնօրինություն, դասղեկներ, դասվարներ Տնօրինություն, դասղեկներ	Կատարվում է Կատարված է
2	Գեղագիտական դաստիարկություն ա) Հետևողական աշխատանք տանել աշակերտ-ների գեղագիտական դաստիարկության գործի բարելավման ուղղությամբ: բ)Սովորողների օգնությամբ ձևավորել շենքի միջացքներն ու կաբինետները:	Ուստարվա ընթացքում,	ՄԿԱ տեղակալ, դասղեկներ, ԴԱԿ	

	գ)Կանաչապատել դասասենյակներն ու միջանցքները:	սեպտեմբեր	ՄԿԱ տեղակալ, դասղեկներ, ԴԱԿ	
3	Ֆիզիկական դաստիարակություն ա) Կազմակերպել սպորտլանդիաներ I-IX դասարաններում: բ)Անցկացնել միջդասարանական սպորտային միջոցառումներ: Դրանք կազմակերպել բարձր մակարդակով, նախապես իիրազեկ դարձնել դասղեկներին և աշակերտներին: գ)Ուսումնական տարվա ընթացքում կազմակերպել <<Առողջության օր>> աշակերտների այցելություն Մասիսի պոլիկլինիկա:	Սեպտեմբեր-հոկտեմբեր Ուստարվա ընթացքում	ՄԿԱ տեղակալ, դասղեկներ, ԴԱԿ, ուսուցիչներ ՄԿԱ տեղակալ, դասղեկներ, ֆիզկուլտուրայի ուսուցիչներ, ՄԿԱ տեղակալ, բուժքույր, ԴԱԿ, դասղեկներ	Կատարվում է Կատարված է
4	Ռազմահայրենասիրական աշխատանք ա)Կազմակերպել միջոցառումներ, պատրաստել պատի թերթեր նվիրված հայ ազգի հերոսներին: բ)Այցելություն Արցախի անկախության, Հայաստանի սահմանների համար զոհված մարտիկների հուշարձաններիին: գ)Անցկացնել քաղպաշտպանությանը նվիրված դասեր:	Ուստարվա ընթացքում	ՄԿԱ տեղակալ, զինղեկ ՄԿԱ տեղակալ, զինղեկ, դասղեկներ ՄԿԱ տեղակալ, զինղեկ, դասղեկներ	Կատարվում է
5	Աշխատանքային դաստիարակություն ա) Բարձրացնել աշխատանքային ուսուցման, աշակերտների մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ տարվող աշխատանքների որակը: բ)Աշակերտների ուժերով կազմակերպել դպրոցում աճեցվող ծաղիկների խնամքի գործը:	Ուստարվա ընթացքում	ՄԿԱ տեղակալ, ԴԱԿ ՄԿԱ տեղակալ, դասղեկներ	Կատարվում է

6	Գրադարանային աշխատանք ա) Օգնել գրադարանավարին կազմելու և հաստատման ներկայացնելու տարեկան աշխատանքային պլանը: բ)Կազմակերպել միջոցառումներ նշանավոր և հիշարժան տարելիցների վերաբերյալ: գ)Ստեղծել <<Պատանի ստեղծագործող>>-ի ակումբ: Նպաստել երեխաների ստեղծագործա-կան մտքի զարգացմանը: Ի հայտ բերել տաղանդավոր աշակերտներին:	Ուստարվա ընթացքում	ՄԿԱ տեղակալ, գրադարանի վարիչ ՄԿԱ տեղակալ, գրադարանի վարիչ ՄԿԱ տեղակալ, գրադարանի վարիչ	Կատարվում է
7	Կատարել դասալսումներ, նպատակային այցելություններ, դիտարկումներ: Դասղեկի ժամերի վերահսկում:		ՄԿԱ տեղակալ	Կատարվում է

2. Պարտադիր կրթության կենսագործում

Հ/Հ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկերտը	Պատասխա-նատու	Նշում
1	Հնարավորության սահմաններում օրենքով նախատեսված կարգով, սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին ապահովել անվճար դասագրքերով:	սեպտեմբեր	տնօրեն, ՄԿԱ տեղակալ, ԴԱԿ	Կատարված է
2	Սահմանել վերահսկողություն պարբերաբար ուշացումների և անհարգելի բացակայություն-ների նկատմամբ, ժամանակին կանխել դրանք, անհրաժեշտության դեպքում առաջնորդվել օրենքով սահմանված կարգով:	ուստարվա ընթացքում	ՄԿԱ տեղակալ, ԴԱԿ	Կատարված է
3	Ուշադրության կենտրոնում պահել հետ մնացող աշակերտներին:	ուստարվա ընթացքում	ՄԿԱ տեղակալ, ԴԱԿ	Կատարված է

4	Աշխատանք տանել 1-9-րդ դասարանների դժվար դաստիարակվող երեխաների և նրանց ծնողների հետ:	ուստարվա ընթացքում	տնօրեն, տեղակալներ, դասղեկներ	Կատարված է

3. Ուսումնական հաստատության սովորողների ֆիզիկական, հոգեկան և սոցիալական առողջությանն ուղղված աշխատանքներ

Հ/Հ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկերտը	Պատասխա-նատու	Նշում
1	Աշխատանք տանել հաստատությունում ալկոհոլի, ծխախոտի, թմրամիջոցների և հոգեմետ նյութերի օգտագործման դեպքերը կանխարգելելու ուղղությամբ:	ուստարվա ընթացքում	ՄԿԱ տեղակալ, ԴԱԿ, դասղեկներ	Կատարվում է
2	Կազմակերպել ծնողների իրազեկմանն ուղղված միջոցառումներ, տեղեկատվական զրույցներ երեխաների խնամքի ու դաստիարակության, ընտանիքում ծնողական պարտականությունների նկատմամբ պատասխանատվության բարձրացման, ինչպես նաև բռնության, երեխայի զարգացման համար անվտանգ միջավայրի ձևավորման հարցերի վերաբերյալ:	ուստարվա ընթացքում	ՄԿԱ տեղակալ	Կատարվում է
3	Սովորողների գիտելիքներիի մակարդակը բարձրացնելու նպատակով կազմակերպել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելմանն ուղղված միջոցառումներ՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի փոխանցման ուղիների և կանխարգելման մասին:	ուստարվա ընթացքում	ՄԿԱտեղակալ, ԴԱԿ, դասղեկներ	Կատարվում է
4	Կազմակերպել և անցկացնել միջոցառումներ, զրույց-բանավեճեր, կլոր սեղաններ՝ ուղղված բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման դեմ, հանդուրժողականության և համագործակցության ձևավորման ուղղությամբ:	ուստարվա ընթացքում	ՄԿԱ տեղակալ, ԴԱԿ, դասղեկներ	Կատարվում է

4. Ներդպրոցական վերահսկողության համակարգ

Հ/Հ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկերտը	Պատասխա-նատու	Նշում
1	Ստուգել պարտադիր կրթության օրենքի սահմանադրական պահանջի կատարման վիճակը դպրոցում և արդյունքները քննարկել տնօրինության նիստում կամ մանկավարժական խորհրդում:	ուստարվա ընթացքում	տնօրեն, ՄԿԱ տեղակալ, ԴԱԿ, դասղեկներ	Կատարվում է
2	Ուսումնասիրել դասղեկների կատարած աշխատանքը: Արդյունքները քննարկել դասղեկների նիստերի ժամանակ:	ուստարվա ընթացքում	ՄԿԱ տեղակալ	Կատարվում է
	Վերահսկողության արդյունքները (տեղեկանքներ, վերլուծություններ, հաշվետվություններ, խորհրդատվություններ) հասանելի են եղել դպրոցի ցանկացած աշխատակցի համար, ինչպես նաև լսումներ են կազմակերպվել տնօրենի մոտ, մանկավարժական խորհրդում, ԾԽ և ԱԽ նիստերին:			

5. Աշխատանք մանկավարժական կադրերիհետ, որակավորման բարձրացում

Հ/Հ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկերտը	Պատասխա-նատու	Նշում
1	Հաշվի առնելով հիմնական դպրոցի աշա-կերտների տարիքային առանձնահատկութ-յունները, պարբերաբար կազմակերպել բանավեճեր, քննարկումներ, կլոր սեղաններ, գիտագործական կոնֆերանսներ և այլն, որոնք է՛լ ավելի կնպաստեն աշակերտների ինքնակրությանը և հոգևոր մտքի զարգաց-մանը:	ուստարվա ընթացքում	Տնօրենի տեղակալներ, առարկայական մասնախմբերի նախագահներ, ուսուցիչներ	Կատարվում է
2	Հասնել այն բանին, որ մանկավարժական ողջ կոլեկտիվը իր գուծունեությամբ բավարարի ուսուցիչներին ներկայացվող ընդհանրական պահանջներին:	ուստարվա ընթացքում	Տնօրենի տեղակալներ	Կատարվում է

6. Կազմակերպչական-մանկավարժական աշխատանք

Հ/Հ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Պատասխա-նատու	Նշում
1	Ուսումնական մասնաշենքի յուրաքանչյուր հարկում, բակում, ձևավորված սրահներում կազմակերպել ամենօրյա հերթապահություն:	մշտապես	տնօրեն,ՄԿԱ տեղակալ	Կատարվում է
2	Վերանորոգել աշակերտական դասագրքերը:	ուստարվա ընթացքում	դասղեկներ, գրադարանի վարիչ	Կատարվում է
3	Կազմակերպել աշակերտների ինքնակառա-վարման աշխատանքները ըստ դպրոցի աշակերտական խորհրդի կանոնադրության:	սեպտեմբեր	ՄԿԱ տեղակալ	Կատարվում է
4	Դասղեկների հետ վերջնականապես ճշտել սոցիալապես անապահով, որբ և միակողմա-նի ծնողազուրկ երեխաների ցուցակը և հնարավորության սահմաններում ապահովել անվճար դասագրքերով:	սեպտեմբեր	տնօրեն, ՄԿԱ տեղակալ, դասղեկ, ծնողխորհրդի նախագահ	Կատարվում է

7. Աշխատանք աշակերտական խորհրդի հետ

Հ/Հ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Պատասխա-նատու	Նշում
1	Դպրոցում ստեղծել աշակերտական խորհուրդ:	սեպտեմբեր	ՄԿԱ տեղակալ, ԴԱԿ, դասղեկներ	Կատարված է
2	Աշակերտական խորհրդի ոժերով ստեղծել հետաքրքրությունների ակումբներ:	սեպտեմբեր	ՄԿԱ տեղակալ, ԴԱԿ, աշակերտական խորհուրդ	Կատարված է

3	Ամրապնդել աշակերտ-ուսուցիչ, աշակերտ-ծնող, աշակերտ-աշակերտ հարաբերությունները: Նպաստել դպրոցի ծնող-խորհրդի և աշակերտական խորհրդի համագործակցությանը:	ուստարվա ընթացքում	ՄԿԱ տեղակա, ԴԱԿ	Կատարվում է
4	Հետևել դպրոցում աշակերտների իրավունքների և ազատությունների պաշտպանությանը:	ուստարվա ընթացքում	տնօրեն, ՄԿԱ տեղակալ, ԴԱԿ, դասղեկներ	Կատարվում է
5	Հետևողական աշխատանք տանել, որպեսզի աշակերտական խորհրդի աշխատանքները նպաստեն երիտասարդ սերնդի, նրա պատշաճ վարքի և վարվելակերպի ձևավորմանը, քաղաքացիական հասարակության կայացմանը և զարգացմանը:	ուստարվա ընթացքում	տնօրեն, ՄԿԱ տեղակալ, ԴԱԿ, դասղեկներ	Կատարվում է
6	Ամիսը մեկ անգամ հրավիրել ԱԽ նիստ:	ուստարվա ընթացքում	ՄԿԱ տեղակալ, ԴԱԿ	Կատարվում է

8. Աշխատանք ծնողների հետ

Հ/Հ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Պատասխանատու	Նշում
1	Հրավիրել դասարանական ծնողական ժողովներ:	ուստարվա ընթացքում	ՄԿԱ տեղակալ, ԴԱԿ, դասղեկներ	Կատարված է
2	Ընտրել 2022-2023 ուստարվա դպրոցի ծնողական խորդրդի կազմը և ներկայացնել տնօրենին հաստատման:	սեպտեմբեր	տնօրինություն	Կատարված է

3	Կազմել ծնողների համար անցկացվող զրույցների և զեկուցումների թեմատիկ պլան:	սեպտեմբեր	տնօրեն, ՄԿԱ տեղակալ	Կատարված է
4	Հետևել դպրոցում աշակերտների իրավունքների և ազատությունների պաշտպանությանը:	ուստարվա ընթացքում	ՄԿԱ տեղակալ, դասղեկներ	Կատարվում է

9. Ֆինանսատնտեսական գործունեություն և ուսումնանյութական բազայի ամրապնդում

Հ/Հ	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Պատասխա-նատու	Նշում
1	Աշխատանք տանել դպրոցական գույքի, սարքավորումների, ուսումնական տեխ-նիկական միջոցների, դիդակտիկ պարա-գաների և այլ նյութերի օգտագործման և պահպանման, հաշվառման ուղղությամբ:	ուստարվա ընթացքում	ՄԿԱ տեղակալ, տնտեսվար	Կատարվում է
2	Ապահովել շենքի ջերմային, լուսային և օդային ռեժիմը: Կանոնավոր վիճակում պահել հակահրդեհային միջոցները:	ուստարվա ընթացքում	տնօրինություն	Կատարվում է
3	Հսկողություն սահմանել տարրական դասարանների սովորողների սննդի կազմակերպման նկատմամբ:	ուստարվա ընթացքում	տնօրեն, ՄԿԱ տեղակալ, ծնողխորհուրդ	Կատարվում է

10. ՄԱԿ-ի «Երեխայի իրավունքների» կոնվենցիային համապատասխան նպաստող գործողությունների

Պ Լ Ա Ն Ի Կ Ա Տ Ա Ր Ո Ղ Ա Կ Ա Ն/ըստ ՈՒԴԱՊ պլանի/

№	Աշխատանքներ	Ժամկետ	Պատասխանատու	Նշում
1.	Աշակերտական խորհրդի գործունեության մեկնարկ:	սեպտեմբեր	ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ, ԴԱ կազմակերպիչ	Կատարված է
2.	Նորմատիվ – իրավական բազայի ստեղծում (կանոնադրություն, աշխ. պլան,աշխատանքային խմբերի ստեղծում,ԿԱՊԿՈՒ աշակերտների ներգրավում):	հոկտեմբեր	տնօրեն, ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ ԴԱ կազմակերպիչ	Կատարված է
3.	ԱԽ աշխատանքների ուսումնասիրություն:	նոյեմբեր	ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ, ԴԱ կազմակերպիչ	Կատարված է
4.	ԱԽ կազմի համալրում, աշխատանքային պայմանների բարելավում:	դեկտեմբեր - փետրվար	տնօրեն, ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ, ԴԱ կազմակերպիչ	Կատարված է

11. Իրավախախտումների կանխարգելմանն ուղղված աշխատանքներ 1-ին կիսամյակում

№	Գործունեության ձև	Պատասխանատուներ	Նշում
1.	Միասնական պրոֆլակտիկայի օր (զրույցներ, քննարկումներ, վերլուծություններ և այլն):	Դասղեկներ,մասնագիտացված աջակցության ծառայություններ,ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ	Կատարված է
2.	Ռիսկի խմբի երեխաների հայտնաբերում:	Դասղեկներ,ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ	Կատարված է
3.	Դասերին հաճախելիության վերահսկման արդյունքների ամփոփում:	դասղեկներ, ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ	Կատարված է
4.	<u>Սոցիալական քարտավորում՝</u> • բազմանդամ, անապահով կամ ծնողազուրկ ընտանիքների երեխաներ • դժվար երեխաներ • խնամակալության տակ գտնվող երեխաներ • դատված ծնողներ • հաշմանդամ երեխաներ • փախստականի կարգավիճակի երեխաներ	դասղեկներ, մասնագիտացված աջակցության ծառայություններ,ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ	Կատարված է
5.	Դժվար երեխաների հետ տարվող աշխատանքների պլանավորում:	Դասղեկներ, ԴԱ կազմակերպիչ,ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ	Կատարված է

6.	ԾԽ անդամների և դասղեկների կողմից համատեղ ստուգումներ. հաշվառում, հաճախելիություն, պատճառներ:	Դասղեկներ, ԴԱ կազմակերպիչ,ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ	Կատարված է
7.	Դաստիարակության մակարդակի ախտորոշում, քարտավորում:	ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ ԴԱ կազմակերպիչ	Կատարված է
8.	Դասղեկական ժամեր. <<Մեր պարտականությունները>>, <<Անչափահասի պատասխանատվությունը>>:	Դասղեկներ,ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ	Կատարված է
9.	Վատ սովորությունների կանխարգելմանն ուղղված զրույցներ:	դասղեկներ, համայնքային ոստիկանության պատասխանատու,ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ	Կատարված է
10	Հաճախելիության արդյունքների գնահատում:	ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ	Կատարված է
11	Սոցիալական քարտավորման վերանայում, լրացումներ, գրանցումներ,տեղեկանքներ:	ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ, մասնագիտացվածաջակցությանծառայություններ	Կատարված է
12	Օգնություն մասնագիտական կողմնորոշման հարցում:	դասղեկներ,ԴԱ կազմակերպիչ,մասնագիտացված աջակցության ծառայություններ,ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ	Կատարված է

13	Հարցազրույցներ ռիսկի խմբի երեխաների և նրանց ծնողների հետ՝ զբաղվածության հարցերի շուրջ:	դասղեկներ,ԴԱ կազմակերպիչ,մասնագիտացված աջակցության ծառայություններ,ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ	Կատարված է

12. Դպրոց – ընտանիք – հասարակություն կապի արտացոլումը սովորողների դաստիարակչական աշխատանքներում 1-ին կիսամյակում

Ամիս	ԹԵՄԱ
սեպտեմբեր	Տվյալների բազայի ստեղծում. բազմանդամ, սոցիալապես անապահով երեխաների հայտնաբերում,քարտավորում:
սեպտեմբեր	Տնօրենի ներքին գնահատման հաշվետվությունը ԾԽ ընդհանուր ժողովում /նկատառումներ,առաջարկություններ/:
սեպտեմբեր	Հանրակրթական ուսումնական հաստատություններում ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման մասին իրազեկում:
հոկտեմբեր	Տաք սննդի կազմակերպումը տարրական դպրոցում:
նոյեմբեր	Դպրոցի սանիտարահիգիենիկ վիճակը: Ուսումնադաստիարակչական հարցեր՝չառաջադիմող աշակերտների հետ տարվող աշխատանքների մասին:
դեկտեմբեր	Դպրոցի սանիտարահիգիենիկ վիճակը: Ուսումնադաստիարակչական հարցեր՝ԿԱՊԿ ունեցող աշակերտների համընդհանուր ներառման խնդիրների մասին:

13. Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք.

ընթացիկ աշխատանքները 1-ին կիսամյակում

2023-2024 ուսումնական տարին սկսվեց գիտելիքի տոնին նվիրված միջոցառմամբ: Մինչև սեպտեմբերի 10-ը կազմվեց դասղեկի տարեկան աշխատանքային պլանները՝ ելնելով աշակերտների տարիքային առանձնահատկություններից և ներկայացվեց հաստատման: Կազմվեց դասղեկի ժամերի գրաֆիկը: Կազմակերպվեցին առաջին ծնողական ժողովները, որոնց օրակարգը բաղկացած էր հետևյալ հարցերից

1. ընտրել ծնողական կոմիտեի նախագահ 2 տեղակալներով,
2. ծանոթացնել ԿԳՄՍ նախարարի N 388 Ն որոշման հետ՝ կապված բացակայությունների և հաջորդ դասարան փոխադրվելու կարգի հետ,
3. տեղեկություններ հավաքել դասարանի սոցիալական վիճակի մասին և լրացնել «Տեղեկություն դասարանի մասին» տեղեկանքը: Ըստ հավաքված տվյալների կատարվեց սոցիական քարտավորում, ըստ որի

1. Սոցիալապես անապահով են- 49 աշակերտներ
2. Բազմազավակ ընտանիքի երեխաներ են – 51 -ը
3. Դժվար դաստիարակվող աշակերտներ են – 57-ը
4. Ծնողազուրկ երեխաներ են- 23-ը
5. Հաշմանդամություն ունեցող աշակերտներ են – 8-ը
6. Զոհված ազատամարտիկների երեխաներ են – 3 -ը
7. Խնամակալության տակ գտնվող -5 երեխա
8. Արցախից բռնագաղթված աշակերտներ են-17-ը
9. Ներառական կրթության մեջ ընդգրկված են – 19 աշակերտներ
10. Դատված ծնողների երեխա -3 աշակերտ
11. Անվճար դասագրիրք են ստացել– 53 աշակերտներ

Երկրորդ կիսամյակում անհրաժեշտ է թարմացնել սոցիալական քարտավորումը:

Հոկտեմբերին անցկացվեց աշակերտական խորհրդի ընտրություններ: Դասարանական աշակերտական խորհրդի անդամները ընտրեցին աշակերտական խորհրդի նախագահ: Աշակերտական խորհրդի նախագահի 4 թեկնածուներից՝ IXᵃ Արտաշես Պողոսյանը, Նարե Պապոյանը, IXᵇ դասարանի աշակերտուհի Անի Սարիբեկյանը և IXᵑ դասարանի աշակերտուհի Ռուզաննա Գևորգյանը ներկայացրեցին իրենց նախընտրական ծրագրերը: Ընտրության արդյունքում ձայների բացարձակ մեծամասնությամբ հաղթեց IXᵃ դասարանի աշակերտուհի Նարե Պապոյանը: Կազմվեցին 6 հանձնախմբեր, որոնք կազմեցին իրենց աշխատանքային պլանները, ըստ հանձնախմբերի բովանդակության:

Ծնողական ընդհանուր ժողովում ԾԽ նախագահ ընտրվեց Կարինե Արսենյանը:

2023-2024 ուսումնական տարում դպրոցում գործում է երեք խմբակ.

1. «Զարմանահրաշ կենդանի մոլորակ» «Բնագիտություն» առարկայից V դասարան-ուսուցիչ Ռ. Արշակյան:
2. «Ուրախ նոտաներ» «Երաժշտություն» առարկայից II դասարան-ուսուցիչ Ն. Մակինյան:
3. «Հելունագործություն» «Տեխնոլոգիա» առարկայից VII դասարան-ուսուցիչ Լ. Մարտիրյան:

I կիսամյակի ավարտին խմբակավարները ներկայացրեցին կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն:

«Ուրախ նոտաներ» խմբակի անդամները հանդես եկան հաշվետու համերգով, իսկ մյուսները կներկայանան ամփոփիչ միջոցառմամբ տարեվերջին:

Հոկտեմբերից սկսեցին գործել երկարօրյա խմբերը: Ըստ նոր ՀՊՉ-ի 1-3 միավոր ստացող, չառաջադիմող աշակերտները 2-րդ, 5-րդ դասարաններից պետք է ընդգրկվեն երկարօրյա խմբակում:

«Մայրենի» և «Մաթեմատիկա» առարկաների երկարօրյա խմբերում ընդգրկվեցին 16 երկրորդ դասարանցիներ:

«Մայրենի» առարկայի երկարօրյայի ուսուցիչ է Ծովինար Մանուկյանը:

«Մաթեմատիկայի» ուսուցիչ՝ Ելիզավետա Օհանջանյանը:

5-րդ դասարաններից ձևավորվեց 1-3 միավոր ստացած չառաջադիմող 12 աշակերտներից ձևավորված խումբ «Մայրենի» առարկայից՝ուսուցչուհի Գոհար Ղազարյան:

Ուսուցիչները ներկայացրեցին I կիսամյակում կատարված աշխատանքների հաշվետվություն: Ըստ տրված գրավոր աշխատանքների վերջնարդյունքում որոշ աշակերտներ բարելավել են իրենց կրթական մակարդակը, 2-րդ կիսամյակի սկզբում կքննարկվի նրանց հետագա անելիքները և կձևավորվեն նոր խմբեր:

Երկարօրյայի ուսուցիչները ներկայացրեցին հաշվետվություն 1-ին կիսամյակում կատարված աշխատանքների մասին:

Ստուգվել է դասղեկի տարեկան պլանները, թերությունները շտկվել են:

Կատարել եմ 40 ժամ դասալսում:

Դասղեկների հետ տարվող աշխատանքներում շեշտը դրվել է դասարանական ամուր կոլեկտիվի ստեղծման, հայեցի դաստիարակության, ազգային արժանապատվության և հպարտության ձևավորման վրա:

Անհրաժեշտ է աշակերտի մոտ ձևավորել հարգալից վերաբերմունք լեզվի, մշակույթի, ավանդույթների նկատմամբ՝ հատկապես հիմա, երբ օտարամոլությունը ամենուր է:

Դասղեկի ժամերը նպաստել են աշակերտների մոտ համագործակցության, հանդուրժողականության մթնոլորտի ստեղծմանը և քննադատական մտքի զարգացմանը:

Կարևոր է մասնագիտական կողմնորոշումը, բնապահպանությունը, կայուն զարգացման ապահովությունը և վերջիններիս զարգացման վերաբերյալ հարկավոր է կազմակերպել ակտիվ քննարկումներ, բանավեճեր և վերլուծություններ:

Կիսամյակի ընթացքում անցկացվել և վերահսկվել է աշակերտների հաճախելիությունը, ուշացումները, անհարգելի բացակայությունները:

Բացակայությունների ժամաքանակի մասին ծանուցվում է ծնողին:

Պարբերաբար ստուգվում է դասղեկի ժամերի և թեմատիկայի կատարողականը: Եղած թերությունները շտկվել են: Չկան գերակատարումներ և թերակատարումներ: Վերահսկվել է դաստիարակչական պլանի իրագործումը:

Դժվար դաստիարակվող 57 աշակերտների ծնողների հետ տարվող աշխատանքները նպաստում են հանդիպող խոչընդոտների հաղթահարմանը: Լավ մակարդակի վրա է դպրոց-ծնող համագործակցությունը:

Այս կիսամյակի ընթացքում դասղեկները սովորողների հանգիստն ու ժամանցը կազմակերպեցին՝ օգտվելով աբոնեմենտային համակարգի ընձեռած հնարավորությունից: Այցելեցին թանգարաններ, թատրոն և մշակութային վայրեր:

2023-2024 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքները նպաստել են՝

1) Կրթության հիմքի վրա ձևավորված մտավոր, հոգևոր և ֆիզիկական կարողությունների հետագա զարգացման ապահովմանը:
2) Քննադատական մտածողության զարգացմանը:
3) Մասնագիտական կողմնորոշման ապահովման և պարզ աշխատանքային համակարգի ձևավորմանը:
4) Բարոյահոգեբանական, հայրենասիրական, գեղագիտական, էկոլոգիական և ֆիզիկական դաստիարակության և առողջ ապրելակերպի հիմքերի ամրապնդմանը:
5) Հայրենիքի պաշտպանությանը իր մասնակցությունն ունենալու պատրաստակամության և հետագայում զինծառայության անցնելու կարևորության գիտակցման ձևավորմանը:
6) Համակարգվել է մասնագիտակցված կրթական աջակցությունների ծառայությունները:
7) Կազմակերպվել և ղեկավարվել է սովորողների դաստիարակչական, արտադպրոցական աշխատանքներն ու դասղեկների գործունեությունը:
8) Աշխատանք է տարվել սովորողների վարքի կուլտուրայի, վարվեցողության նորմերի և կանոնների ապահովման ուղղությամբ, աջակցել դպրոցական ինքնավարությանը, հասարակական վերահսկողությանը:
9) Հսկողություն է իրականացվել ուսումնադաստիարակչական աշխատանքի ընթացքի և սովորողների առաջադիմության և վարքի նկատմամբ:
10) Հսկվել է ուսումնական հաստատության կանոնադրությամբ և կարգապահական կանոններով սահմանված պահանջների կատարումը:
11) Կազմակերպվել են ազգային, մշակութային ժառանգության պահպանման ու զարգացման ուղղությամբ միջոցառումներ:
12) Ամուր հիմքերի վրա է դրվել աշակերտ-դպրոց-ընտանիք կապը:

Պարբերաբար ծնողների համար կազմակերպվել են մանկավարժական ընթերցումներ՝ անցումային տարիքում գտնվող աշակերտների, դեռահասների վարքի մասին <<Փոքր չէ, բայց մեծ էլ չէ>> վերնագրով:

Ռազմահայրենասիրական դաստիարակության ամրապնդման ուղղությամբ 3-րդ, 6-րդ, 7-րդ դասարաններում դասղեկի ժամերին համապատասխանաբար 6 և 8 ժամ սովորել են <<Ինչպես պաշտպանվել բնական աղետների ժամանակ>>:

Նա, ով ցանկանում է երեխային լավ դաստիարակել՝ դատապարտված է մշտապես հետևելու արդարամիտ հայացքների: Բալզակ

<<Կայացումը>> այն մակարդակն է, երբ երեխան կարող է ապրել ինքնուրույնաբար:
Դպրոցը պետք է նպաստի աշակերտի կայացմանը:
Կիսամյակի վերջում անցկացվեցին ծնողական ժողովներ արդյունքների ամփոփման նպատակով: Շատ բացակայություններ ունեցող աշակերտների ծնողները տեղեկացվեցին ծանուցագրով:
Առանց վերահսկողության անհնար է բացահայտել մանկավարժական գործընթացի թերությունները և դրանք հաղթահարել:
Պարբերաբար կատարվում է դաստիարակչական աշխատանքների մակարդակի մշտադիտարկում:
Կատարվել է 40 ժամ դասալսում:

14.Մ Ի Ջ Ո Ց Ա Ռ Ո Ւ Մ Ն Ե Ր

1. Գիտելիքի տոն- «Ողջույն դպրոց»:

2. Անկախության տոն-Միջոցառում, որին հյուրընկալվեցին մեր սփյուռքահայ բարեկամները: Սեպտեմբերի 27-ին հիշատակի օր, այցելություն շիրիմներին:

3. Երեխաների իրավունքների պաշտպանության և բուլինգի երևույթների կանխարգելման նպատակով համագործակցել ենք Ոստիկանության Անչափահասների համապատասխան տեսչության հետ:

4. Տարրական դասարաններում 1-4-րդ դասարաններում դասղեկի ժամերին 10 ժամ անցնում են «Ճանապարհային երթևեկության կանոնները»:
Գործնական դ/ժ. III^{դ} դաս. –Զաքարյան Քրիստինե
Սեպտեմբերի 27-ին 44 օրյա պատերազմի զոհերի հիշատակին նվիրված դասղեկի ժամեր:

5. Ուսուցչի օրվան նվիրված դասղեկի ժամեր: Ընդունեցինք նաև մեր բարեկամ-բարերարներին:

6. «Թարգմանչաց տոն»-ին նվիրված միջոցառումների շարք դ/ժ.:

7. «Իրազեկման դասեր», «Բնական աղետներ, արտակարգ իրավիճակներ» վերնագրով:

8. Հուշաթերթ դ/ժ. Ժամանակ սովորեցին «Օդային տագնապի» ժամանակ ինչպես պետք է պաշտպանվել 5-9-րդ դասարաններում գրեցին թեստային աշխատանք: Արդյունքը լավ էր, կատարվեց վերլուծություն, ապահովվեց հետադարձ կապ:

9. Ամանորին նվիրված կազմակերպվեց սպորտային միջոցառում՝ վոլեյբոլի մրցույթ, 9-րդ դասարանցիների միջև: I տեղ գրավեց IXᵍ դասարանը, II տեղ- IXᵇ դասարանը, III տեղ- IXᵃ դասարանը: Շնորհակալություն Աննա Կարապետյանին և Լենդրուշ Գևորգյանին:

10. Ամանորյա Դիմակահանդեսը անցավ բարձր կազ,ակերպվածությամբ և մակարդակով: Շնորհակալություն դասղեկներ Մ. Ալեքսանյանին, Ռ. Արշակյանին, Մ. Հակոբյանին, Ա. Սարգսյանին:

11. Դասղեկի ժամին ռուսաց լեզվի ուսուցչուհի Ա. Մինասյանը կազմակերպեց <<Зимняя сказка>> ամանորյա գեղեցիկ միջոցառում:

12. Դեկտեմբերի 14-ին «Երաժշտությունը և մենք» խորագրով միջոցառում, որը նաև «Ուրախ նոտաներ» երաժշտական խմբակի հաշվետու համերգն էր, ուսուցչուհի՝ Ն. Մակինյան:

13. «Տեխնոլոգիա» առարկայի ուսուցիչ Լ. Մարտիրյանի և 6-րդ դասարանների դասղեկներ Վարդուհի Բաբայանի (6ᵃ), Լուսիկ Խաչատրյանի (6ᵇ), Լիլիթ Իսրայելյանի (6ᵍ), Թագուհի Մանուկյանի (6ᵑ) համագործակցության արդյունքում «Սննդի պատրաստման տեխնոլոգիա» բաժնի ամփոփումը հաջողված էր:

14. Դեկտեմբերի 7-ին 5-9-րդ դասարաններում գրեցին թեստային աշխատանք:

15. VIᵑ դասարանում դասղեկի ժամը նվիրված էր ազգային հերոս Մոնթե Մելքոնյանի կյանքին և մարտական ուղուն: «Իմ կենացը մի խմեք, այլ իմ գործը շարունակեք»-Արշիլ Գորկի:

16. VIᵇ դասարանում-ուսուցչուհի Գ. Ղազարյան, միջոցառումը որպես դասի շարունակություն:

17. Հ. Մաթևոսյանի «Հացը» դասին շարունակեց էքսկուրսիան «Մամիկ» հյուրատուն, որտեղ մասնակցեցին հացարարաման ծիսակարգին, թոնրի շրթին լավաշ փռեցին և այլն:

18. Նոյեմբերի 9-22-ը ընկած ժամանակահատվածում՝ ՄԱԿ-ի երեխաների իրավունքների մասին կոնվերցիայի շրջանակներում Աշակերտական խորհուրդը սոցիալ-մշակութային հանձնախումբը պատրաստեց պաստառ երեխաների իրավունքների վերաբերյալ: Պատրաստվեց ըստ բովանդակության համապատասխան գեղեցիկ պաստառ:

19. VIII[գ] դասարանը դասղեկ Գ. Ղազարյանի նախաձեռնությամբ դ/ժ.-ին այցելեց «Ռոլան» մանկապատանեկան 19-րդ միջազգային ֆիլմերի փառատոնին, ռեժիսոր՝ Արսեն Ասլանյանի «Միմի» ֆիլմի դիտումն և քննարկումը հենց ռեժիսորի հետ: Դա նպաստեց նաև մասնագիտական կողմնորոշմանը,մասնավորապես հետաքրքրություն ռեժիսուրայի հանդեպ: Ռեժիսորի մասնագիտության հանդեպ աշակերտների հետաքրքրությունը բավարարվեց:

20. Մասնագիտական կողմնորոշման նպատակով հոկտեմբերի 19-ին «Քո արվեստը դպրոցում» հանրապետական ծրագրի շրջանակներում հանդիպեցին Սոս Սարգսյանի անվան համազգային թատրոնի ղեկավար, դերասանուհի և բեմադրիչ Նարինե Գրիգորյանի հետ:

21. VIII[բ] դասարանի դասղեկ Լ. Մարտիրյանը դասղեկի ժամին կազմակերպեց հետաքրքիր և յուրօրինակ լուծումներով քննարկում «Ո՞վ է հոգեպես հարուստ մարդ» թեմայով: Ինքնագնահատում:

22. VIII[գ] դասարանի աշակերտները դասղեկ Գ. Ղազարյանի նախաձեռնությամբ հետաքրքիր ձոն-ուղերձ էր նվիրված ուսուցիչներին՝ նվիրված Ուսուցչի օրվան:

23. VIII[դ] դասարանը, դասղեկ Ա. Կարապետյանը դասղեկի ժամին այցելեցին պանթեոն Մեր հերոսներին հարգանքի տուրք մատուցելու «Հայրենիքը ես եմ»:

Դասղեկի գործառույթները

Ի գիտություն է ընդունվել դասղեկների կողմից ,որ՝

- ✓ Դասղեկը օրինակ է աշակերտի համար:
- ✓ Պետք է անհատական մոտեցում ունենա յուրաքանչյուր աշակերտի հանդեպ:
- ✓ Ծանոթ լինի յուրաքանչյուր աշակերտի ընտանեկան, սոցիալական վիճակին:
- ✓ Պետք է իմանա յուրաքանչյուր աշակերտի ընտանեկան խնդիրների մասին:
- ✓ Ճանաչի իր աշակերտին, նրա խնդիրները և բնավորության առանձնահատկությունները:
- ✓ Ցավոք, դեռ կան դասղեկներ, որոնք ունեն <<Անգլիական թագուհու>> կարգավիճակ:
- ✓ Եթե ուսուցիչը սիրում է և՛ իր աշխատանքը, և՛ իր աշակերտներին, նա կլինի կատարյալ ուսուցիչ:
- ✓ Դպրոցը պետք է նպաստի աշակերտի կայացման գործընթացին:
- ✓ Կայացումը դա ինքնուրույն ապրելու, դրսևորվելու կարողություն է:

Դասարանի ղեկավարը (այսուհետ՝ դասղեկ), իսկ տարրական դպրոցում՝ դասվարը՝

1) դաստիարակչական աշխատանք է կատարում իր դասարանի սովորողների շրջանում, հայտնաբերում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված սովորողի (ընտանիքի) և դրա

մասին մեկօրյա ժամկետում տեղեկացնում է դպրոցի տնօրենին՝ սերտորեն համագործակցելով մյուս մանկավարժական աշխատողների հետ.

2) մասնակցում է իր ղեկավարած դասարանում սովորողների կրթության առանձ-նահատուկ պայմանների կարիքի դիտարկմանը, բացահայտմանը, գնահատմանը և մանկավարժահոգեբանական աջակցության համապատասխան ծառայությունների մշակմանը, դրանց ապահովմանը.

3) նպաստում է սովորողների նկատմամբ դպրոցի և ընտանիքի միասնական մանկավարժական պահանջների կատարման ապահովմանը.

4) անհրաժեշտության դեպքում սովորողների համար կազմակերպում է ուսումնական օգնություն.

5) իրականացնում է դասարանի համար սահմանված գործավարությունը, էլեկտրո-նային գրանցումները, դպրոցի տնօրինությանը ներկայացնում սովորողների առաջադիմության, հաճախումների և վարքի մասին տեղեկատվություն.

6) կազմակերպում է սովորողների առողջության ամրապնդմանն ու ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ, մրցույթներ, նպատակային էքսկուրսիաներ, շրջագայություններ և այլ միջոցառումներ.

7) դպրոցի մանկավարժական խորհրդի քննարկմանն է ներկայացնում սովորողին խրախուսանքի կամ կարգապահական տույժի ներկայացնելու հարցը:

Դասղեկի ժամերից

Ուզում եմ նշել Թագուհի Մանուկյանի հայրենասիրական երկու ուսանելի և գեղեցիկ դասղեկի ժամերը նվիրված նկարիչ Արշիլ Գորկու կյանքին և ստեղծագործությանը և Ազգային հերոս Մոնթե Մելքոնյանին ‹‹Իմ կենացը մի խմեք, իմ գործը շարունակեք›› վերնագով:

Հարգարժան ծնողնե՛ր.

Ուզում ենք ձեզ հիշեցնել, որ այնպիսի կախարդական խոսքեր, ինչպես օրինակ <<Բարև ձեզ>>-ն ու <<շնորհակալություն>>-ը և <<ներեցեք>>-ը առաջին անգամ իմանում են ընտանիքում:

Հենց ընտանիքում են երեխաները սովորում լինել ազնիվ, ճշտապահ և ջանասեր, լավ վերաբերվել ընկերներին, հարգել մեծերին և ուսուցիչներին:

Հենց ընտանիքում են սովորում լինել կոկիկ, ուտելիքը բերանում չխոսել և աղբը աղբամանը գցել:

Ընտանիքում նրանք նաև սովորում են լինել կազմակերպված, խնամքով վարվել սեփական իրերին և ձեռք չտալ ուրիշի իրերին:

Իսկ դպրոցում մենք երեխաներին սովորեցնում ենք լոգու, գրականություն, մաթեմատիկա, պատմություն, աշխարհագրություն, ֆիզիկա, քիմիա և ֆիզկուլտուրա:

Ծնողների դաստիարակությունը մենք սոսկ ամրապնդում են, բայց չենք փոխարինում նրանց:

Հաջողության հասնելու համար վերելակ գոյություն չունի.բարձրացի՛ր աստիճաններով:

Հաջողությունն այն ուժն է, որով քայլում ես մեկ անհաջողությունից մյուսը՝ առանց խանդավառությունդ կորցնելու:

Չերչիլ

Ու կա մի բան, որ միշտ պետք է հիշել՝ հիասթափությունների կողքին են ծնվում հրաշքները:

- Ամեն մարդ երկու դաստիարակություն է ստանում, մեկը նրան տալիս են ծնողները՝ հաղորդելով իրենց կենսափորձը, մյուսն՝ ավելի կարևորը, նսա ինքն է ստանում:
- Իսկ վարքագիծը հայելի է, որի մեջ յուրաքանչյուրն իր դեմքն է ցույց տալիս:

Գյոթե

Դպրոցը պատրաստում է կյանքի մի աշխարհ, որը գոյություն չունի: